

Ծ Ւ Ա Ծ Ա Ն

ՏԵՍՈՒԹԻՒՆ Ա.ԲՏԱ.ԲԻՆ Ք.Ա.Ա.ԲԱԿՈՆ Ա.ՆՅԵՑ.

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՇՎԱՅ ՊԱՏԵՐԱԶՄԸ.

Ամերիկայի Միացեալ Նահանգաց պատերազմին պատճառը այնպիսի յայտնի խնդիր մըն է որ արդարութիւն ճանչցող ու սիրող մարդք դիւրաւ կրնայ գուշակել թէ երկու կողմին ո՞ք պիտի յաջողութիւն գտնէ: Հիւսիսայինները կուզեն որ գերի գնեն ու ծախելը վերնայ իրենց մէջէն. իսկ հարաւայինները ոտք կորխեն որ այս շահաբեր գործողութենէն զիրենք ետ քաշելու ոչ ոք իրաւունք չունի: Որչափ որ յայտնի է առաջիններուն իրաւունքը, նոյնչափ պայծառ կտեսնուի նաեւ հարաւայիններուն անիրաւութիւնը: Եւ սակայն սոքա իրենց յոյսը դրած էին Գաղղիոյ եւ Անգղիոյ վրայ, իբր թէ այս երկու տէրութիւնները իրենց պաշտպան պիտի կենան ու պիտի ստիպեն հիւսիսայինները բաժնուելու հարաւայ-

իններէն, ու ծգելու որ սոքա ինչպէս որ կուզեն՝ այնպէս կառավարուին: Եւյիրաւի, եթէ Գաղղիոյ եւ Անգղիոյ վաճառականաց մնար խնդիրը, թերեւս նոքա այնպէս կորոշէին. այսինքն հարաւայնոց կամ բաժանասիրաց կողմը կըքոնէին՝ որպէս զի իրենց բամբակեղենի գործարանները չդադրին, ու հարաւային Ամերիկայէն բամպակը անպակաս գայ եւրոպա. բայց որովհետեւ բաժանասիրաց կամքին կատարուելով՝ մարդավաճառութեան գարշելի սովորութիւնն ալ պիտի յաւիտեան հաստատուէր Ամերիկային մէջ, եւ եւրոպայի լուսաւորեալ տէրութիւնները չէին կըքնար այս բանիս հաւանիլ, հիւսիսայինները քանի գնացին զօրացան, հարաւայինները շատ տեղ յաղթուեցան, եւ կերեւնայ թէ քիչ ատենէն բոլովին պիտի նուանուին:

ՆՈՐ ԶՈՐՄԱՆԱԼԻ ԳԱ.ՃԱ.Ջ ՄԸ

Այժմու գաճաշներուն մէջ շատ անուանի էր Փոմ-Փուս անունով անգղիացին, իւր կարգէ գուրս մանր հասակին համար: Բայց այժմ կլսեմք որ Մանչսթըրի մէջ նոր գաճաշ մը երեւցեր է որ Փոմ-Փուսէն ալ երրորդ մասով պղտիկ է, ուստի եւ շատ աւելի զարմանալի:

Այս գաճաշը որ կըսուի ձօրք ՌւաՇինկթըննըթ, ծնած է 1844-ին ապրիլի 2-ին. ուստի 18 տարեկան է հիմայ, բայց հազիւ թէ 18 բթաշափ բարձրութիւն ունի: Սրամիտ ու կրթուած է, եւ անգղիարէն ու գալղիարէն լեզուները շատ լաւ կիսուի: Հայրը՝ որ բաւական ունեւոր մարդ մըն է, ամենեւին միտք չունի եղեր որդին ասդիս անդին

պտըտցընելով ցուցնելով ստակ շահելու. բայց վերջապէս ոսկիի բաղցը յաղթեր է իւր առաջադրութեանը, եւ մօտերս յանձներ է իւր զաւակը Պա՛ռնըմ անունով երեւելի շատախօսին, որ ամէն այս տեսակ բաները իւր վրայ կառնու ցուցընել ու բարողել ստակով:

Պառնըմ խոստացեր է որ 3 տարիէն ետեւ գաճաշին հօրը վճարէ 10 հազար սթէռլին, որ 2 հարիւր 50 հազար ֆրանք կընէ. ասկէ զատ շատ մըն ալ ընծաներ պիտի ընէ, ու քաղաքէ քաղաք պտըտցընելու՝ հագուեցնելու՝ զարդարելու եւ ուրիշ ամէն տեսակ պիտոյքներն ու ծախքերուն հոգացողութիւնը իւր վրան առած է: